

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ) (ՀՅՈՒՄԻՍ - ՀԱՐԱՎ ԾԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ 3) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 մայիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

ընթաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2014 թվականի մարտի 11-ին ստորագրված վարկային համաձայնագրում (Ընդհանուր գործողություններ) (Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի մայիսի 20-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային համաձայնագիրը (Ընդհանուր գործողություններ) (Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3) ստորագրվել է 2014 թվականի մարտի 11-ին (այսուհետ՝ նաեւ Վարկային համաձայնագիր):

Վարկային համաձայնագիրն ստորագրվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2009 թվականի սեպտեմբերի 15-ին ստորագրված շրջանակային ֆինանսավորման համաձայնագիրը (Հայաստան ԲՖԳ Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր), որին Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 14-Ա որոշմամբ հավանություն է տրվել, եւ այն, ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2010 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-860 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2010 թվականի փետրվարի 2-ի ԱԺՈ-186-Ն որոշմամբ:

2. Վարկային համաձայնագրով սահմանված կարգով Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) տրամադրում է հարյուր միլիոն (100.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ՝ Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրն (Ծրագիր) իրականացնելու նպատակով:

Ծրագրի նպատակն է Վարկառուի տարածքում զարգացնել ենթատարածաշրջանային եւ պետական ճանապարհատրանսպորտային ցանցը:

Վարկային համաձայնագրի համաձայն՝ Ծրագրի իրականացման արդյունքում.

- կոյուրացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները.

- կմեծանա առետրի շրջանառությունը եւ մրցակցությունը.

- կնվազեն փոխադրումների ծախսերը.

- կմեծանա շուկաների, աշխատատեղերի եւ սոցիալական ծառայությունների հասանելիությունը.

- կբարելավվի կառավարումը:

Վարկային համաձայնագրի համաձայն՝ Ծրագիրը կազմված է հետեւյալ հիմնական բաղադրիչներից.

- Թալին եւ Լանջիկ քաղաքների միջեւ գտնվող մոտ 18.7 կմ երկարությամբ Թալին-Լանջիկ երկուղի ճանապարհային հատվածի վերակառուցում եւ այդ հատվածի ընդլայնում՝ վերածելով այն երկկողմանի երթուղիության քառուղի մայրուղու.

- երկարաժամկետ ճանապարհային ենթաուղորտային ծրագրի, ճանապարհային ակտիվների կառավարման եւ ճանապարհների սպասարկման կառավարման համակարգի նախապատրաստում եւ իրականացում.

- Հյուսիս - հարավ միջանցքի (304 կմ) Արտաշատից Քաջարան հատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրության պատրաստում.

- Ծրագրի իրականացման աջակցություն եւ Ծրագրի հետագա տրանշի նախապատրաստում, այդ թվում՝ դրա հետ կապված տեխնիկատնտեսական ուսումնասիրության եւ ճարտարագիտական մանրամասն նախագծի պատրաստում:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչեւ 2017 թվականի հունիսի 30-ը:

**3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.**

ա) վճարել տոկոսագումար եւ պարտավճար՝ Վարկային համաձայնագրով սահմանված կարգով եւ չափով.

բ) ապահովել, որ վարկի միջոցներն ուղղվեն Ծրագրի ծախսերի ֆինանսավորմանը՝ Վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան.

գ) վարել Ծրագրի համար առանձին հաշիվներ, Ծրագրի համար պատրաստել տարեկան ֆինանսական հաշվետվություններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան, ամեն տարի ապահովել այդ ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որը կիրականացվի աուդիտի միջազգային չափանիշներին կամ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ դրանց ներպետական համարժեք ստուգմանը համապատասխան, անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձառությունը եւ տեխնիկական առաջադրանքներն ընդունելի են ԱԶԲ-ի համար.

դ) չկնքել աշխատանքների կատարման որեւէ պայմանագիր, քանի դեռ Ծրագիրն իրականացնող գործակալությունը Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմիններից չի ստացել վերջնական շրջակա միջավայրի ազդեցության գնահատում եւ վերջնական վերաբնակեցման պլանի վերջնական հաստատում, եւ շրջակա միջավայրի կառավարման պլանի համապատասխան դրույթները չի ներառել աշխատանքների իրականացման պայմանագրում.

ե) ապահովել, որ գնված բոլոր ապրանքները եւ ծառայությունները (այդ թվում, առանց սահմանափակումների, համակարգչային սարքավորումները, ծրագրերը եւ համակարգերը՝ լինեն դրանք առանձին գնված, թե ներառված լինեն գնված այլ ապրանքների

եւ ծառայությունների մեջ) չխախտեն կամ չվնասեն արդյունաբերական կամ մտավոր սեփականության՝ որեւէ երրորդ կողմի իրավունքները կամ պահանջները.

գ) ապահովել, որ Ծրագրի ճանապարհի վերակառուցումն իրականացվի նախագծում, շինարարական մասնագրերում կամ մրցութային այլ փաստաթղթերում սահմանված տեխնիկական մասնագրերի համաձայն, ինչպես նաեւ շինարարության վերահսկողությունը, որակի հսկողությունը եւ պայմանագրերի կառավարումն իրականացվի միջազգային չափանիշներին համապատասխան.

ե) ապահովել Ծրագիրն իրականացնող գործակալության կողմից Ծրագրի ճանապարհի երկայնքով մեքենաները կշռելու կայանների տեղադրումը, որի միջոցով վերահսկվելու է գերծանրաբեռնվածությունը, ինչպես նաեւ կիրառել համապատասխան կանոններ ծանրաբեռնվածությունը սահմանափակելու նպատակով.

ը) ապահովել, որ համապատասխան պետական մարմինները խիստ վերահսկողություն իրականացնեն սահմանների վրա, ինչպես նաեւ մայրուղու (ճանապարհի) պարեկային ծառայություն իրականացնեն՝ կանխելով մարդկանց, վայրի բնության, կենդանիների վտանգված տեսակների եւ անօրինական նյութերի թրաֆիկինգը.

թ) ապահովել կամ պահանջել, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունն ապահովի, որ հողերի ձեռքբերման ու վերաբնակեցման գործողություններն իրականացվեն համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հողերի ձեռքբերման եւ ոչ կամավոր վերաբնակեցման օրենսդրության, ոչ կամավոր վերաբնակեցման երաշխիքների, վերաբնակեցման շրջանակի, վերաբնակեցման պլանով նախատեսված՝ երաշխիքների մոնիտորինգի հաշվետվությամբ նախատեսված՝ ուղղիչ կամ կանխարգելիչ գործողությունների, իսկ հողի ձեռքբերումն ու վերաբնակեցումն ավարտել նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, եւ այս պահանջը, համապատասխանաբար, ամրագրել աշխատանքների պայմանագրում, ինչպես նաեւ տրամադրել համապատասխան ռեսուրսներ՝ ֆինանսավորելու համար վերաբնակեցման պլանին վերաբերող փոխհատուցումն ու ծախսերը.

ժ) ապահովել, որ Ծրագիրը որեւէ ազդեցություն չունենա տեղաբնակների վրա: Այն դեպքերում, երբ Ծրագիրը, այնուամենայնիվ, ունենում է նման ազդեցություն, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ Ծրագրով պահպանվեն Հայաստանի Հանրապետության գործող օրենքներն եւ կանոնակարգերը, ինչպես նաեւ ԱԶԲ-ի երաշխիքների վերաբերյալ քաղաքականության մասով հայտարարությունը (2009թ.):

**4. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին եւ նպատակաուղղված են ստեղծելու արդյունավետ, անվտանգ**

եւ կենսակայուն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք, որը կապահովի Հայաստանի Հանրապետության կապը երկրի ներսում եւ միջազգային կապը՝ այլ երկրների հետ:

Միաժամանակ հարկ է նշել, որ սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը եւս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման եւ Ծրագրի կառավարման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2014 թվականի մարտի 11-ին ստորագրված վարկային համաձայնագրում (Ընդհանուր գործողություններ) (Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

27 մայիսի 2014 թվականի  
ՍԴՈ- 1152